ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 01. 01.2022

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոց

1. Գնահատման փիլիսոփայությունը

Մեր առաքելությունն է՝ ***կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի***, որի իրագործման համար մենք պատրաստակամ ենք Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոցում իրականացնելու ***ներգրավող, համապատասխան, մարտահրավերային*** ու ***նշանակալի*** ուսումնական ծրագիր և ուսուցման գործընթաց:

Մեր ձեռքբերումները որոշելու համար գնահատումը կազմում է ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի անբաժանելի մասը: Այն կենտրոնական տեղ է զբաղեցնում Միջազգային բակալավրիատի (IB) Կրտսեր դպրոցի ծրագրի (PYP) նպատակներում՝ սովորողների գործունեությունը նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպելու PYP հիմնական տարրերին համապատասխան.

- գիտելիքների ձեռքբերում
- հասկացությունների իմաստավորում
- հմտությունների զարգացում
- ՄԲ սովորողի որակների և վերաբերմունքի (արժեքների) ձևավորում
- գործունակության(Agency) խթանում
- գործողությունների (արարքների) (Action) ձեռնարկում:

PYP - ում գնահատման հիմնական նպատակը ուսուցման գործընթացի և նրա արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ապահովումն է:

Գնահատման գործընթացն առհասարակ կոչված է լուծելու հետևյալ խնդիրները.

- Հայտորոշել և վերհանել սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների սկզբնական մակարդակը՝ ուսուցումը կառուցողական մոտեցմամբ իրականացնելու նպատակով,
- վերահսկել սովորողների ուսումնական գործունեությունն ու արձանագրել ձեռքբերումները,
- ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, ծնողներին և արտաքին մարմիններին տրամադրել ամբողջական ու հավաստի տեղեկատվություն,
- վերլուծել և կատարելագործել ուսումնական ծրագրերի բովանդակությունը,
- յուրաքանչյուր սանի ծնողներին տրամադրել փաստեր նրա ուսումնառության և զարգացման մասին,
- կապ ապահովել դպրոցի առաջընթացով հետաքրքրված կողմերի հետ:

Գնահատումը PYP-ում սովորողների ուսումնական գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության գործընթացն է, որը բացահայտում է՝ ինչ գիտեն և ինչ վերաբերմունք ունեն սովորողները, ինչպես են հասկանում ու մեկնաբանում

հասկացություններն ու երևույթները, ինչ կարող են նրանք անել ուսումնառության տարբեր աստիճաններում: Այլ կերպ ասած՝ գնահատումն ապահովում է հետադարձ կապ ուսումնական գործընթացի մասին՝ ***հայտորոշիչ*** (նախնական գնահատում), ***ձևավորող*** և ***ամփոփիչ*** տեսակներով:

2. Գնահատման սկզբունքները

Գնահատումը ուսուցման գործընթացի վերաբերյալ փաստեր, հավաստի, բազմակողմանի տվյալներ հավաքագրելու շարունակական գործընթաց է՝ ուղղված ուսուցման գործընթացի զարգացմանն ու կատարելագործմանը: Այն պետք է արտացոլի առկա փորձը, ներկայացնի տարբեր կողմերից, խթանի սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:

2.1. Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոցը գնահատումն իրականացնում է *<u>առաջին հերթին</u>* սովորողների ուսումնառության գործընթացը բարելավելու, *<u>երկրորդ</u>*՝ սովորողների ձեռքբերումները PYP և ազգային ուսումնական ծրագրերի բովանդակությանն ու պահանջներին համապատասխանեցնելու և *<u>երրորդ</u>*՝ դպրոցական համայնքին սովորողների ուսումնառության ընթացքի ու արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

2.2. Արդյունավետ գնահատումը պետք է լինի.

- համապատասխան
- հավաստի
- համարժեք
- կառավարելի
- անկողմնակալ
- արդար
- արժանահավատ
- ապահով
- թափանցիկ[1]

Գնահատում իրականացնելիս դպրոցը կարևորում է յուրաքանչյուր սովորողի ուսումնառությունը հետազոտությունների միջոցով և հենվում է ուսուցման ***ընթացքի*** ու ***արդյունքների*** որակի վրա:

3. <u>Ով է գնահատում</u>

Գնահատումը համագործակցային և տեղեկատվական գործընթաց է, որն ընդգրկում է ողջ դպրոցական համայնքը՝ սովորողներ, ընտանիքներ, ուսուցիչներ.

3.1. ***Սովորողների դերը.***

Սովորողներն ընդգրկված են գնահատման գործընթացում՝ ուսուցման գործընթացի վերաբերյալ վերլուծություններ անելու, հասկացությունների և տարբեր երևույթների վերաբերյալ իրենց ուրույն ընկալումները դրսևորելու, ակտիվ ներգրավվածության, քննադատական մտածողության և ինքնագնահատման կարողությունները զարգացնելու նպատակով:

3.2. ***Սովորողների ընտանիքների դերը.***

[1] Isabel Nisbet (Cambridge Assessment; former Ofqual chief executive)

Սովորողների ընտանիքները տեղեկանում են իրենց երեխայի(ների) գիտելիքների և հմտությունների մակարդակի, դպրոցում ունեցած վերաբերմունքի (արժեքների) և գործողությունների (արարքների) դրսևորումների մասին: Նրանք ուսուցիչներից ստանում են իրենց երեխայի(ների) զարգացման և ուսումնական գործունեության վերաբերյալ հավաստի ու ամբողջական տեղեկատվություն, այդ գործընթացին և ընդհանրապես դպրոցի աշխատանքին աջակցելու նպատակով: Ընտանիքները հնարավորություն ունեն իրենց երեխայի(ների) ձեռքբերումների ու դժվարությունների մասին տեղեկանալու՝ պարբերական այցելությունների միջոցով դառնալով ուսումնական գործընթացի ականատեսը և անմիջական մասնակիցը:

3.3. ***Ուսուցիչների դերը.***

Ուսուցիչները գնահատման միջոցով ընտանիքներին, տնօրենությանը *առաջին հերթին* տեղեկացնում են ուսուցման ու ուսումնառության յուրաքանչյուր փուլի մասին՝ ներառյալ պլանավորումը, իրականացումը և գնահատումը, *երկրորդ*՝ տրամադրում ապացույցներ այդ մասին, որոնք ավելի լավ կներկայացնեն գործընթացը դպրոցական ողջ համայնքին, *երրորդ*՝ համատեղ դիտարկում և վերլուծում սովորողների առաջընթացը և դրա ներկայացման ձևերը, *չորրորդ*՝ հաշվի առնելով ուսումնառության բազմազան ձևերը, սովորողների առանձնահատկությունները՝ բարելավում ուսուցումը:

3.4. ***Մանկավարժական առաջնորդության դերը.***

Մանկավարժական առաջնորդությունն աջակցում է դպրոցական լիարժեք համայնքի կառուցմանը՝ նրա բոլոր անդամներին տրամադրելով ուսուցման և սովորողների ուսումնառության, գնահատման արդյունքների վերաբերյալ հավաստի և անհրաժեշտ տեղեկատվություն՝ քաջատեղյակ դարձնելու դպրոցի առաջընթացին ու անմիջական մասնակից դարձնելու գործընթացներին:

4. Ինչ և ինչպես ենք գնահատում

Սովորողների ուսումնառությունը կազմակերպվում է ուսումնական գործընթացի պլանավորման և կատարելագործման միջոցով՝ ուղղված նրանց անհատական կամ խմբի պահանջներին: Մենք գնահատում ենք սովորողների գիտելիքներն ու ձեռքբերումները՝ ուշադրության առնելով PYP ուսումնական ծրագրի հիմնական տարրերը:

4.1. Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի.

- **Գնահատում (Assessing).** ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՛նչ գիտեն և ի՛նչ են սովորել երեխաները:
- **Գրանցում (Recording)** կամ արձանագրում. ինչպե՞ս ենք ընտրում, հավաքագրում և վերլուծում տվյալները:
- **Հրապարակում (Reporting)** կամ հաշվետվություն. ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկատվությունը կամ արդյունքները:

Ըստ անցկացման ժամանակի և նպատակի՝ տարբերակում ենք գնահատման ***հայտորոշիչ*** (նախնական), ***ընթացիկ*** և ***ամփոփիչ*** տեսակները:

4.2. Հայտորոշիչ կամ նախնական գնահատում

Հայտորոշիչ (նախնական) ***գնահատումը*** գնահատման առանձնահատուկ տեսակ է: Այն կիրառվում է ուսուցման փուլի սկզբում՝ սովորողների կարիքները հստակեցնելու և ուսուցման գործընթացը դրանց համապատասխան ուղղորդելու նպատակով:

Յուրաքանչյուր վերառարկայական թեմայի սկզբում ուսուցիչները պարզում են սովորողների նախնական գիտելիքներն ու փորձը մինչև նոր աշխատանքների ու փորձառության մեջ ընկղմվելը: Դա հնարավորություն է ընձեռում ուշադրություն դարձնելու յուրաքանչյուր սովորողի անհատական պատրաստվածությանն ու պահանջներին, սովորելու ոճերին, հետաքրքրություններին, հենվել նախնական գիտելիքների վրա և պլանավորման ժամանակ առաջնորդվել կառուցողական մոտեցմամբ:

4.3. Ձևավորող կամ ընթացիկ գնահատում

Ընթացիկ (ձևավորող) գնահատումը տեղեկատվություն է տրամադրում ուսուցման հաջորդ փուլերն արդյունավետորեն պլանավորելու համար: Այն միահյուսված է ուսուցման գործընթացին և հնարավորություն է տալիս ուսուցիչներին պարզելու՝ ինչ գիտեն և ինչ կարող են անել սովորողները: Ընթացիկ (ձևավորող) գնահատման հիմնական նպատակը ուսուցման գործընթացի խթանումն է պարբերաբար կանոնավոր հետադարձ կապի ապահովման միջոցով: Այդ գործընթացն օգնում է սովորողներին բարելավելու իրենց գիտելիքներն ու ընկալումները, խթանելու ինքնավստահությունն ու սովորելու խանդավառությունը, ինչպես նաև ինքնաանդրադարձ վերլուծություններ կատարելու, զարգացնելու ինքնագնահատման կարողությունները և բացահայտելու հաջողության հասնելու երաշխիքները: Ուսուցիչները մշտապես դիտարկում, գրանցում, միմյանց հետ քննարկում, բառերով նկարագրում են սովորողի ձեռքբերումները, նրա ուժեղ և թույլ կողմերը, ուղղորդում են սանին սեփական ուսումնառության գործընթացը բարելավելու և դրան համապատասխան պլանավորում կամ վերանայում են իրենց քայլերը:

4.4. Ամփոփիչ գնահատում

Ամփոփիչ գնահատման նպատակը ուսումնական գործընթացի արդյունքների մասին տեղեկատվության ապահովումն է: Այն ուսումնական գործընթացի կոնկրետ հատվածի ավարտն է, որի ընթացքում սովորողները հնարավորություն են ունենում ցուցադրելու իրենց ձեռքբերումները PYP բոլոր տարրերի մասով: Ամփոփիչ գնահատումը տեղեկություններ է պարունակում միաժամանակ ծրագրի մի քանի տարրերի մասին՝ սովորողների ձեռք բերած գիտելիքների, նրանց մեջ ձևավորված կարողությունների ու հմտությունների, դրսևորած վերաբերմունքի, հիմնական գաղափարների ընկալման մակարդակի ու վարքի ձևերի մասին, ինչպես նաև կենտրոնական գաղափարի ընկալման խորության վերաբերյալ և խթանում է սովորողների գործողությունները:

4-րդ դասարանում ամփոփիչ գնահատումը իրականացվում է նաև միավորային գնահատմամբ՝ միջին դպրոց փոխադրման շարունակական գործընթացի սահուն ապահովման նպատակով (**հավելված 1**):

5. Միջազգային բակալավրիատի (ՄԲ) սովորողի նկարագրի (IB Learner Profile) վերլուծություն

ՄԲ բոլոր երեք ծրագրերի համար առանցքային նշանակություն ունի IB Learner Profile որակների և միջազգային մտածողության ձևավորումը:

IB Learner Profile որակների ձևավորման գնահատումը և այդ մասին տեղեկատվության վերլուծությունը կատարվում է տարբեր միջոցներով.

- Անհատական օրագրի վարում
- Համադպրոցական հանդիպումների ժամանակ իրականացվող քննարկումներ
- «Action wall» - ի վարում
- Տողանների անցկացում
- Թեմատիկ և կիսամյակային հաշվետվություններ
- Այդ նպատակով ստեղծված հեքիաթների միջոցով (Մանկակրթարան և 1-ին դասարան)
- PYP ստուգատեսի օրագրերի վարում:

6. Սովորողների վերջնական ձեռքբերումները ներկայացվում են PYP ստուգատեսում (PYP Exhibition)

PYP ստուգատեսը ամփոփիչ գնահատման օրինակ է: 4-րդ դասարանի սաները մշակում և ներկայացնում են իրենց անհատական կամ խմբային նախագծերը վերառարկայական թեմաների շրջանակներում՝ ներկայացնելով PYP բոլոր տարրերը (գիտելիք, ուսումնառության մոտեցումներ (ATL), հասկացություններ, գործունակություն (Agency), գործողություն (Action)): PYP ստուգատեսը հնարավորություն է տալիս դիտարկելու նաև IB Learner Profile որակների զարգացման մակարդակը յուրաքանչյուր սովորողի մեջ: PYP ստուգատեսի գնահատման մոտեցումները և սկզբունքները ներառված են **հավելված 1**-ում:

Երբ սովորողների անհատական կամ խմբային նախագծերը պատրաստ են լինում, դպրոցը նշում է իրադարձությունը ծնողական համայնքի, աշխատակիցների, հյուրերի մասնակցությամբ: Գործընթացին մասնակցում են նաև միջին և ավագ դպրոցների սաները, ուսուցիչները, մանկավարժական առաջնորդության անդամները:

7. Ավարտական քննություններ

Համաձայն ՀՀ կրթության մասին օրենքի՝ կրթական յուրաքանչյուր աստիճանի ավարտին սովորողները հանձնում են քննություններ:

4-րդ դասարանի վերջում սովորողները հանձնում են ավարտական քննություններ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից: Քննական միավորները լրացվում են ամփոփիչ բնութագրի մեջ և հանձնվում միջին դպրոց:

8. Գնահատման ռազմավարություններ և գործիքներ

8.1 Ուսուցիչներն ազատ են ըստ նպատակի ընտրելու գնահատման ռազմավարությունները և կիրառելու անհատական կամ խմբային աշխատանքի գնահատման ցանկացած տեսակ: Գնահատման գործընթացում ակտիվորեն ընդգրկվում են նաև սովորողները՝ ընտրելով գնահատման գործիքներ, մշակելով համապատասխան նյութեր (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Գնահատման ռազմավարություններ և գործիքներ					
Գնահատման գործիքներ Գնահատման ռազմավարություններ	Ռուբրիկներ	Օրինակներ	Տեղեկագրեր	Գրառումներ	Հաջորդա-կանություններ
Դիտարկում	√		√	√	√
Առաջադիմության գնահատում	√	√		√	√
Գործընթացի գնահատում	√		√	√	√
Ընտրված պատասխաններ		√	√		√
Բազմաթիվ պատասխաններ ենթադրող առաջադրանքներ	√	√		√	√

8.2. Յուրաքանչյուր սովորողի ուսումնառության գործընթացը դիտարկվում է ուսուցիչների կողմից, կատարվում են գրառումներ: Ավագ մանկավարժը բանավոր կամ գրավոր (գրառումներ անհատական օրագրում, էլեկտրոնային նամակներ, հեռախոսազանգ և այլն) ծնողին ներկայացնում է տեղեկատվություն գործընթացի մասին:

8.2. Ամեն վերառարկայական թեմայի վերջում յուրաքանչյուր սովորողի համար բոլոր մասնագետների մասնակցությամբ կազմվում է ամփոփ տեղեկատվություն ուսումնառության գործընթացի ու արդյունքների վերաբերյալ՝ PYP բոլոր տարրերի և IB Learner Profile որակների ընդգրկմամբ (Report Card): Գնահատումն իրականացվում է հատուկ էլեկտրոնային ձևաթղթի միջոցով և ավագ մանկավարժի կողմից ի մի բերվելուց հետո ուղարկվում է սանի ծնողներին թեմայի ավարտից հետո 2 շաբաթվա ընթացքում:

8.3. Կիսամյակի ավարտին (1-ին կիսամյակի համար՝ մինչև հունվարի 30-ը, 2-րդ կիսամյակի համար՝ մինչև հունիսի 15-ը) էլեկտրոնային տարբերակով ներկայացվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ամփոփ բնութագիրը:

8.4. Տարվա մեջ առնվազն մեկ անգամ կազմակերպվում է ծնող(ներ)-ուսուցիչ(ներ)-սովորող հանդիպում (3-Way Conference), որի ընթացքում ներկայացվում են գործընթացին և ուսումնական ձեռքբերումներին վերաբերող հարցեր:

8.5. Տարվա մեջ 3 անգամ (սեպտեմբերի 1-15-ը, փետրվարի 15 - 28-ը, հունիսի 15 – 20-ը) իրականացվում են ծնողական հանդիպումներ՝ ուսումնական գործընթացի վերաբերյալ ընդհանրական հարցեր, կազմակերպական խնդիրներ քննարկելու նպատակով: Ծնողական հանդիպումներ կարող են անցկացվել նաև ըստ անհրաժեշտության:

9. Գնահատման ձևաթղթեր

Սովորողների ուսուցման վերաբերյալ տվյալների արձանագրումը գնահատման ռազմավարություն է բոլոր սովորողների համար PYP ողջ ընթացքում: Ուսուցիչներն այդ նպատակով կիրառում են տարաբնույթ մեթոդներ և սովորողների ձեռքբերումների

արձանագրման ձևեր՝ այդ թվում նաև տեսալուսանկարչական միջոցներ, համառոտ գրառումներ և այլն:

Կիրառվող փաստաթղթերից են.

- Մատյաններ
- Կիսամյակային աշխատանքների ամփոփ բնութագրի աղյուսակ (կիսամյակային Report Card)
- Յուրաքանչյուրր վերառարկայական թեմայի ընթացքի և արդյունքների անհատական գնահատման աղյուսակ (վերառարկայական թեմայի Report Card)
- Թղթապանակ
- Անհատական օրագրեր

Կրթական հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար մշակվում են տարբեր մոտեցումներ ու եղանակներ (Տե՛ս Ներառական կրթության քաղաքականությունը):

10. Թղթապանակ

Դպրոցը պարտավորվում է սովորողի ուսման ընթացքի վերաբերյալ հավաստի և վկայող փաստեր հավաքել: Թղթապանակը ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և պահման լավագույն տարբերակներից է, որը ծառայում է սովորողի առաջընթացն ու ձեռքբերումները տեսանելի դարձնելուն: Այն յուրաքանչյուր սովորողի «ուսումնառության պատմությունն» է, նրա հաջողությունների, անձի զարգացման ստեղծագործական աճի վկայությունը՝ կոնկրետ օրինակների ու ուղեկցող դիտարկումների տեսքով:

Թղթապանակը կազմվում է մեկ ուսումնական տարվա համար և տարեվերջին ծնող - ուսուցիչ հանդիպման ժամանակ հանձնվում է սովորողի ընտանիքին:

11. Այսպիսով, արդյունավետ գնահատումը հնարավորություն է տալիս.

11.1.<u>Սովորողներին</u>՝

- կիրառելով ուսուցման տարբեր ձևեր, մտավոր կարողություններ՝ դրսևորել գիտելիքների ամբողջությունը, հասկացությունների ընկալումն ու հմտությունները,
- նախապես տեղեկանալ և հասկանալ, ինքնուրույն ընտրել կամ մշակել այն չափանիշները, որոնց պետք է համապատասխանեն իրենց աշխատանքի արդյունքները, վերլուծել իրենց և ուրիշների ուսումնառությունը և բացահայտել՝ ինչը կարիք ունի բարելավման,
- իրենց սովորածը հաղորդել ուրիշներին
- գնահատվել հատուկ կրթական կարիքներից ելնելով (լոգոպեդական, հոգեբանական և այլն):

11.2.<u>Ուսուցիչներին</u>՝

- տեղեկատվություն ստանալ ուսուցման յուրաքանչյուր փուլի մասին՝ հաշվի առնելով սովորողների պահանջները և ուսուցիչների ուսումնասիրությունները,
- մշակել և զարգացնել ուսուցման արդյունավետ մոտեցումներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները, մտավոր կարողություններն ու մշակութային տարբեր արժեքները,
- համագործակցաբար վերլուծել և բարելավել սովորողների առաջընթացը,
- խթանել ստեղծարարությունը, նորի ստեղծումն ու զարգացումը:

11.3.<u>Ծնողներին</u>՝

- ծանոթանալ իրենց երեխայի (ների) ուսումնառության և զարգացման վերաբերյալ փաստերին,

- աջակցել դպրոցում իրականացվող աշխատանքներին,
- ապահովել մշտական կապ դպրոցի և դասավանդողների հետ:

12. Գնահատման քաղաքականության փաստաթղթի վերանայում

Դպրոցը գնահատման քաղաքականությունը և գնահատման վերաբերյալ համաձայնությունները վերանայում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության:

Աղբյուրներ.

- Making the PYP Happen: A Curriculum framework for international primary education, IBO, 2009.
- From Principles to Practice, IBO, 2018.
- Հանրակրթության պետական չափորոշիչ, 2011:

Գնահատման քաղաքականության հավելված 1

Համաձայն միջին դպրոցի (ՄԴ) գնահատման քաղաքականության, ըստ որի՝ սովորողների առաջադիմության ամփոփումն իրականացվում է թվանշանով արտահայտված գնահատմամբ, ինչպես նաև կրտսեր դպրոցի (ԿԴ) սաների՝ ՄԴ փոխադրման գործընթացի սահուն շարունակականությունն ապահովելու նպատակով, ԿԴ 4-րդ դասարանում իրականացվում է ամփոփիչ միավորային գնահատում համաձայն **Աղյուսակ 1-ի և Աղյուսակ 2-ի**:

1. Միավորային գնահատում իրականացվում է Մայրենի, Մաթեմատիկա, Օտար լեզու և Ռուսաց լեզու առարկաներից:
2. Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է կիսամյակի բոլոր գնահատականների թվաբանական միջինով՝ համաձայն **Աղյուսակ 1 և 2-ի**:
3. Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է երկու կիսամյակների գնահատականների միջին թվաբանականով: Առանձին դեպքերում, երբ սանի կողմից առարկան ուսումնասիրվում է մեկ կիսամյակ, տվյալ կիսամյակի թվանշանը նաև տարեկան վերջնական թվանշանն է:
4. Համաձայն ՀՀ կրթության մասին օրենքի՝ 4-րդ դասարանի վերջում սովորողները հանձնում են ավարտական քննություններ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից: Քննական միավորները միջինացվում են սովորողի տարեկան գնահատականի հետ, լրացվում են ամփոփիչ բնութագրի մեջ և փոխանցվում ՄԴ:
5. ՄԴ-ում սաների՝ համաֆինանսավորման և վճարովի տեղերի բաշխման ժամանակ սաների ուսումնական ռեյտինգը հաշվարկվում է համաձայն **Հավելված 1.1-ի:**
6. Անհատական ծրագրով աշխատող սաների գնահատումը իրականացվում է՝ հաշվի առնելով իր համար կազմված ուսումնական ծրագրի չափորոշչային պահանջները:
7. Անհատական ուսումնական պլանով աշխատող սովորողների ձեռքբերումների ամփոփիչ գնահատումը կազմակերպել համաձայն Ներառական կրթության քաղաքականության:
8. Եթե սովորողը հարգելի պատճառով բացակայել է և չի կատարել միավորային գնահատման առաջադրանքը, ապա դպրոց ներկայանալուց հետո՝ առնվազն երկու շաբաթվա ընթացքում, լրացնում է բաց թողած աշխատանքը:
9. Գնահատումն իրականացվում է 7-միավորային համակարգով (տե՛ս **Աղյուսակ 1**):
10. Գնահատվող յուրաքանչյուր առարկայից սովորողների համար սահմանվում է գնահատանիշերի որոշակի քանակ (տե՛ս **Աղյուսակ 3**):
11. Միավորներով գնահատված բոլոր աշխատանքների համար կազմակերպվում է նույնացման գործընթաց, որտեղ վերջնարդյունքները համապատասխանեցվում են՝ ըստ ընդունված միավորային սանդղակների (տե՛ս **Աղյուսակ 2**):
12. PYP ստուգատեսի վերջնական գնահատումն իրականացվում է համաձայն **Աղյուսակ 1-ի:** PYP ստուգատեսի վերջնական արդյունքները համադրվում են սանի մյուս ձեռքբերումների հետ ուսումնական ռեյտինգը հաշվարկելիս:

Աղյուսակ 1. Վարկանիշային աղյուսակ

Կարգ բնութագրիչ	Կատարված աշխատանքի /չափորոշչի պահանջի կատարման ծավալը	Չափորոշչային պահանջի համապատասխանու-թյուն	Գնահատման բնութագիր	Գնահատականիշ
A+	95-100%	**Գերազանցում է սպասելիքները** **Exceeding expectations**	Սովորողն ունի բովանդակային լայն գիտելիքներ և խորը ընկալում: Ի լրումն վերոնշյալի, սովորողը հասել է կարողունակությունների շատ բարձր մակարդակի՝ ուսումնառության և հմտությունների առումով և կարող է կիրառել այդ գիտելիքներն ու հմտությունները անծանոթ իրավիճակներում: Դրսևորում է յուրահատուկ, ստեղծարար մոտեցումներ, մշտապես ներկայացնում է որակյալ աշխատանք:	**7**
A	90-94%	**Լիովին համապատասխանում է սպասելիքներին** **Completely meeting expectations**	Սովորողն ունի բովանդակային լայն գիտելիքներ և խորը ընկալում, կարող է պատրաստակամորեն կիրառել այդ գիտելիքները տարաբնույթ իրավիճակներում:	**7**
B	75-89%	**Համապատասխանում է սպասելիքներին** **Meeting expectations**	Սովորողն ունի բովանդակային համապատասխան գիտելիքներ և ընկալում, ինչպես նաև բարձր մակարդակի կարողունակություն ուսումնառության և հմտությունների առումով, կարողանում է կիրառել այդ գիտելիքներն ու հմտությունները իրեն առաջարկվող իրավիճակների գերակշիռ մասում:	**6**
C	60-74%		Սովորողը բովանդակության գլխավոր ոլորտների վերաբերյալ ունի հիմնարար գիտելիքներ և ընկալում, ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված հմտությունները կիրառելու որոշ իրավիճակներում:	**5**
D	50-59%	**Մոտենում է սպասելիքներին (բավարար)** **Approaching expectations (Satisfactory)**	Սովորողը բովանդակության գլխավոր ոլորտների վերաբերյալ ունի տարրական գիտելիքներ և ընկալում: Ունի կարողունակությունների սահմանափակ մակարդակ ուսումնառության և հմտությունների առումով: Ի վիճակի է դրանք կիրառել հազվադեպ իրավիճակներում:	**4**
E	25-49%	**Կարիք ունի ամրապնդման / չի մոտենում սպասելիքներին** **Needs strengthening (Not yet approaching expectations**	Սովորողն ունի նվազագույն գիտելիքներ և ընկալում բովանդակության սակավաթիվ ոլորտներում, հասել է շատ սահմանափակ կարողունակության ուսումնառության որոշ գործընթացների և հմտությունների առումով:	**3**
F	24 % և քիչ		Չի համապատասխանում նվազագույն գնահատականի պահանջին	**0-2**

Վերանայվել է 2022 թվականի սեպտեմբերին:

Աղյուսակ 2. Միավորային գնահատման նույնացում

Միավոր			Գնահատանիշ	Թվանշան՝ ըստ Հանրակրթության պետական չափորոշչի
20	10	7		
19,0-20,0	9,5-10,0	6,8-7,0	7	10
18,0-18,9	9,0-9,4	6,5-6,7		9
17,0-17,9	7,5-8,9	5,5-6,4	6	8
12,0-16,9	6,0-7,4	4,5-5,4	5	6, 7
10,0-11,9	5,0-5,9	3,5-4,4	4	5
5,0-9,9	2,5-4,9	2,5-3,4	3	4
0-4,9	0-2,4	0-2,4	0-2	1-3

Աղյուսակ 3. Կիսամյակի ընթացքում գնահատվող աշխատանքների տեսակ և քանակ

Աշխատանքի տեսակ	Առարկա / Քանակ			
	Մայրենի	Մաթեմատիկա	Ռուսերեն	Անգլերեն /Ֆրանսերեն
Բանավոր հարցում	8-14	6-8	6-7	6-7
Թեմատիկ աշխատանք	4	4	3	3
Գործնական աշխատանք	1	1	-	-
Կիսամյակային աշխատանք	1	1	1	1

Հավելված 1.1. 4-րդ դասարանի ավարտին սաների ուսումնական ռեյտինգի հաշվարկում

Սաների ուսումնական ռեյտինգը ԿԴ ավարտին հաշվարկվում է հաշվի առնելով սաների ակադեմիական առաջադիմությունը Մայրենի, Ռուսաց լեզու, Օտար լեզու, Մաթեմատիկա առարկաներից և PYP ստուգատեսի վերջնական արդյունքը՝ արտահայտելով տոկոսներով:

Ռեյտինգը հաշվարկվում է ստորև բանաձևի համաձայն.

$$R = \frac{\frac{Մտ + Մբ}{2} + \frac{ՄԹտ + ՄԹբ}{2} + ՕՏտ + Ռտ + US}{50} \times 100\%$$

Որտեղ՝

R-ը՝ ռեյտինգն է,

Մտ-Մայրենիի տարեկան գնահատականը,

Մբ-Մայրենիի քննական գնահատականը,

ՄԹտ-Մաթեմատիկայի տարեկան գնահատականը,

ՄԹբ-Մաթեմատիկայի քննական գնահատականը,

ՕՏտ-Օտար լեզվի տարեկան գնահատականը,

Ռտ-Ռուսաց լեզվի տարեկան գնահատականը,

US-Ստուգատեսի վերջնական արդյունքը ըստ վարկանիշային աղյուսակի՝ միավորով արտահայտված: